Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Գենդերային դիսկուրսը և գենդերային քաղաքականության հեռանկարները Հայաստանում:

Ալինա Պողոսյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում դրամաշնորհ N 17841 : Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5
1.1 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5
1.2 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 8
ԳԼՈՒԽ 2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 12
2.1 ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ 12
2.2 ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ 16
2.3 ԱՐԵՎՄՏՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ 18
2.4. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ 20
ԳԼՈՒԽ 3. ԳԵՆԴԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԱՅԻՆ ԴԱՇՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 22
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային գենդերային անհավասարության ինդեքսի (Gender Gap Index) համաձայն Հայաստանն աշխարհի 135 երկրների մեջ 92-րդն է և ունի 0.664 գործակից[1]: Սա նշանակում է, որ Հայաստանում կանայք տնտեսական, առողջապահական, կառավարման և այլ առումներով ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն քան տղամարդիկ: Սա նաև նշանակում է, որ այս անհավասարությունը Հայաստանի դեպքում ավելի մեծ է, քան աշխարհի 135 երկրների ծանրակշիռ մեծամասնության: Ընդ որում վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանի վարկանիշն անկում է ապրել՝ 71- ից դառնալով 92:

Չնայած սրան, այսօր Հայաստանում բավարար ուշադրություն չի դարձվում գենդերային հիմնահարցերին: Քաղաքականության հիմնական փաստաթղթերը, որոնք ինչ-որ չափով անդրադառնում են այդ հարցերին ձևավորվում են մեծապես միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտականությունների կատարման շրջանակներում: Դրանք ավելի շատ ուղղված են գենդերային քաղաքականության վերաբերյալ միջազգային համապատասխան կառույցների պահանջների բավարարմանը, քան Հայաստանում առկա գենդերային հիմնահարցերի գործնական հաղթահարմանը:

Փորձագիտական կարծիքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հարցերի վերաբերյալ ձևավորվում են որոշակի ծրագրեր և հայեցակարգային փաստաթղթեր, սակայն դրանք կյանքի չեն կոչվում ֆինանսական, ադմինիստրատիվ կամ այլ ռեսուրսների սահմանափակության պատճառով: Հաճախ Հայաստանում գենդերային հիմնահարցրեը հանրային ու քաղաքական պակաս ուշադրության են արժանանում ավանդական ու պատրիարխալ մշակութային արժեհամակարգերի և տարածված դիսկուրսների սահանափակության պատճառով:

Հասարակությունում տարածված դիսկուրսները ոչ միայն հուշում են հիմնահարցի նկատմամբ տարբեր սեգմենտների մոտեցումները, այլ նաև կարող են կանխորոշել և գնահատել այդ հիմնահարցերի հաղթահարման հնարավոր ուղեծրերը: գենդերային քաղաքականությանն ուղղված քայլերը կարող են արդյունավետ չլինել, եթե դրանք համապատասխան դիսկուրսային դաշտում չեն: Ավելին գենդերային քաղաքականությունը կարող է տապալվել, եթե ձևավորված չէ դրան համապատասխան դիսկուրսը: Ուստի քաղաքականության ձևավորման տեսակետից կարևորագույն խնդիր է հասկանալ, թե հասարակության որ սեգմենտներում ինչպիսի դիսկուրսային դաշտեր կան ձևավորված, և որոնք են այն դիսկուրսային շրջանակները, որտեղ այս կամ այն քաղաքական որոշումը կարող է կյանքի կոչվել: Ռելեվանտ դիսկուրսի զարգացումը կարևոր նախապայման է գենդերային հիմնահարցերի հաղթահարման, դրացն ուղղված քաղաքականության ձևավորման և առաջխաղացման համար:

Սույն վերլուծությունն ուղղված է Հայաստանում գենդերային քաղաքականության դիսկուրսիվ համատեքստին

[1] World Economic Forum, The Global Gender Gap Report 2012, p. 98, accessed on 24.02,2013, http://www3.weforum.org/docs/WEF_GenderGap_Report_2012.pdf

ուղղված առաջարկների ձևավորմանը: Այն հիմնված է Հայաստանում տարածված գենդերային հիմնական դիսկուրսների և հիմնախնդիրների հաղթահարման համար դրանց առաջարկած հնարավորությունների ուսումնասիրության վրա:

Ուսումնսիրությունը հիմնված է փաստաթղթերի վերլուծության, Երևանում և Գյումրիում իրականացված 8 ֆոկուս խմբերի և 20 փորձագիտական հարցումների վրա:

Փաստաթղթերի ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են գենդերային հիմնահարցերի վերաբերյալ քաղաքականության փաստաթղթերը (հայեցակարգերը, օրենսդրության նախագծեր, ծրագրեր, և այլն) և ուսումնասիրությունները:

Փորձագիտական հարցումներ են իրականացված գենդերային հիմնահարցերով զբաղվող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև գենդերային քաղաքականության մշակողների հետ:

Ֆոկուս խմբեր են անցկացվել կրթական տարբեր մակարդակ ունեցող կանանց և տղամարդկանց խմբերում:

Վերլուծությունը բաղկացած է երեք գլուխներից: Առաջին գլուխը նկարագրում է Հայաստանում առկա գենդերային հիմնական խնդիրներին: Այն համառոտ կերպով ներկայացնում է նաև առկա հիմնահարցերին ուղղված ՀՀ սոցիալական քաղաքականությունը և դրա բացերը: Երկրորդ գլուխում վերլուծվում են Հայաստանում առկա հիմնական դիսկուրսները: Վերջին՝ երրորդ գլուխը քննարկում է ներկայիս դիսկուրսային դաշտի հնարավոր միտումները և դրան ուղղված սոցիալական քաղաքականության հնարավոր հեռանկարները: Վերլուծությունն ավարտվում է եզրակացություններով և գենդերային քաղաքականությանն ուղղված առաջարկներով:

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կա՞ն արդյոք Հայաստանում գենդերային հիմնախնդիրներ: Այո:

Ըստ որոշ հետազոտությունների, **Հայաստանում կանանց 52%-ն առնվազը մեկ անգամ ենթարկվել է բռնության որևէ տեսակի[2]: Իրենց կյանքի ընթացքում երբևէ զուգընկեր ունեցած** հարցման մասնակից կանանց 61.0%-ը ենթարկվել է վերահսկողական վարքի, 25.0%-ը ենթարկ-վել է հոգեբանական բռնության, 8.9%-ը ենթարկվել է ֆիզիկական բռնության[3]:

Չնայած նրան, որ Հայաստանում կանանց **52%-ը** բռնության որևէ տեսակի զոհ է, այնուամենայնիվ **կինն ավելի հաճախ դիտվում է որպես մեղավոր, քան զոհ**: Հայաստանում տղամարդկանց 55%-ը կարծում է, որ կինն իր մեղքով է բռնության ենթարկվում[4]: Տղամարդկանց 31% և կանանց 22% -ը համաձայնում է առնվազը մեկ պատճառի հետ, որով կարելի է արդարացնել ամուսնու կողմից կնոջը ծեծելը[5]:

Կանանց 9.5%-ը ենթարկվել է ֆիզիկական և սեռական բռնության[6]: Ընդ որում սեռական բռնության վերաբերյալ ցուցանիշները կարելի է համարել նվազեցված՝ հաշվի առնելով այն տարածված կարծիքը, որ «կնոջ պարտականությունն է ամուսնու հետ սեռական հարաբերություններ ունենալ, եթե նույնիսկ դա չի ցանկանում»: Այսպես է կարծում հարցված բնակչության 36%-ը և գյուղական բնակչության 48%-ը[7]:

Հայաստանում **գյուղական վայրերում կանանց 17%-ը մինչծննդյան կամ ծննդաբերական բժշկական օգնության հնարավորություն չունի[8]:** Միջազգային գնահատման համաձայն ըստ գենդերային առողջապահական խնդիրները ներկայացնող ցուցանիշի Հայաստանն աշխարհի 135 երկրների շարքում 130-րդն է և իր ետևում թողնում է միայն Վիետնամը, Չինաստանը, Ալբանիան, Հնդկաստանը և Ադրբեջանը[9]:

Տղաների և աղջիկների ծնունդների հավասարության ցուցանիշով Հայաստանն զբաղեցնում է է՛լ ավելի ցածր դիրք՝ 131-րդ է: Սա նշանակում է, որ **Հայաստանում իգական սեռի պտուղների դեպքում հղիության արհեստական ընդհատման դեպքերն ավելի մեծ են, քան արական սեռի դեպքում**:

---

[2] Բրիտանական խորհուրդ, http://www.youtube.com/watch?v=_nw-VrW_PLw&list=UU7kXwDQYBMF7Ixzfot8ChnA&index=9, accessed on 9.02.2013

[3] Nationwide Survey on Domestic Violence Against Women in Armenia 2008-2009, UNFPA (2010)

[4] Բրիտանական խորհուրդ

[5] Armenia 2005 Demographic and Health Survey Key Findings, (2005), p. 217

[6] Nationwide Survey on Domestic Violence Against Women

[7] Dallakyan, Ani and Hakobyan, Narine, Domestic Violence and Abuse of Women in Armenia: Report on Nationwide Survey Findings, Turpanjian Center for Policy Analysis/Women"s Rights Center, (2007), p. 72.

[8] Գենդերային քաղաքականության հայեցակարգ, էջ 22

[9] World Economic Forum, The Global Gender Gap Report 2012, p. 98

Չնայած Հայաստանում առկա գենդերային լուրջ մարտահրավերների, այնուամենայնիվ քաղաքականություն մշակող և իրականացնող մարմիններում կանանց ներկայացվածությունը բավականին փոքր է: Սա ոչ միայն ինքնին գենդերային հիմնախնդիր է, այլ նաև հանգամանք, որ դանդաղեցնում է Հայաստնում առկա գենդերային հիմնահարցերի հաղթահարումը:

ՀՀ 18 նախարարից միայն 2-ը և ԱԺ 131 պատգամավորներից միայն 14 –ն են կին[10]: Եվ նույնիսկ այս կանանց շրջանում ավելի մեծ է կուսակցական սոլիդարությունը, քան գենդերային: Այս է պնդում նաև փորձագիտական կարծիքը:

«Կանայք որոշում ընդունող պետական մարմիններում քիչ են ու եթե կան էլ, ապա լուրջ դերակատարություն չունեն: Օրինակ ԱԺ- ում գտնվող կանայք նույնիսկ չեն ցանկանում բարձրացնել գենդերային հարցեր, որովհետև օրենքներ մշակողներն ու ընդունողները տղամարդիկ են, ու նրանք ընդունում են հենց տղամարդկանց խաղի կանոնները: Հակառակ դեպքում այդ նույն տղամարդկանց կողմից կմարգինալացվեն: Այնինչ, պետք է պետական հատվածում հայտնվեն կանայք, ովքեր պահանջատեր կլինեն իրենց իսկ հարցերին, ձայն կբարձրացնեն: Քվոտայի իրավունքը տրվեց , բայց դեռ շոշափելի արդյունքներ չենք քաղում այդ իրավունքից»[11]:

Հայաստանում նույն աշխատանքի դիմաց կանայք ստանում են տղամարդկանց աշխատավարձի 69%-ը[12]: Իսկ կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց միջին աշխատավարձի 60%-ը[13]:

Այս իրավիճակն է՛լ ավելի է սրվում եթե հաշվի առնենք, որ նման անհավասարությունն արդարացվում է հասարակության և կարծիք ձևավորողների որոշ շրջանակներում: Այսպես՝ հետազոտություններից մեկի ընթացքում Հայաստանում հարցվածների **62%-ը գտնում է, որ տղամարդիկ պետք է աշխատանքի ավելի մեծ իրավունք ունենան, քան կանայք**[14]:

Աշխատաշուկայում կանանց անհավասարությունն արդարացնող և նույնիսկ ողջունող տեսակետներ կարելի է գտնել նաև իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության հրապարակումներում: Կուսակցության հրապարակած տեքստերից մեկում գրված է. *«Երբ Հայաստանյան մամուլում խոսք էր լինում այն մասին, որ, ասենք, Ճապոնիայում միևնույն աշխատանքի դիմաց կին աշխատողին վճարում են գրեթե կիսով չափ, քան տղամարդուն, դա ընկալվում էր իբրև խտրականության խայտառակ երևույթ, կանանց աշխատանքի անամոթ շահագործում կապիտալիստ ձեռնարկատիրոջ կողմից: Մինչդեռ, … Ճապոնացիները հաշվի են առնում, որ աշխատանքում կնոջից չի կարելի նույնքան նվիրում, ուրեմն և նույնքան արգասիք ակնկալել, որքան տղամարդուց: …Մեզ ևս անհրաժեշտ է, չխաբվելով*

[10] www.gev.am/structure/; http://parliament.am/deputies.php?lang=arm

[11] Գենդերային հիմնահարցերով զբաղվող ՀԿ ներկայացուցիչ

[12] World Economic Forum, The Global Gender Gap Report 2012, p. 98, accessed on 24.02,2013, http://www3.weforum.org/docs/WEF_GenderGap_Report_2012.pdf

[13] Գենդերայկին քաղաքականության հայեցակարգ, էջ 11

[14] CRRC, 2011, How does the South Caucasus Compare?, p.2

մարդու իրավունքների վերացական և վերազգային կարգախոսներին, վարձատրման համակարգում նախատեսել սեռային-հոգեբանական բնույթի առանձնահատկություններ»[15]:

Փաստորեն, ուսումնասիրություններն ու գնահատականները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա բազմաթիվ գենդերային հիմնախնդիրներ բավականին սուր են:

Դրանց անուշադրությունը տարիների ընթացքում կարող է հիմնախնդիրներ առաջացնել նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ժողովրդագրությունը, տնտեսությունը և այլն: Տղա երեխաների ծնունդների մեծաքանակությունն աղջիկ-ների նկատմամբ միանշանակորեն ժողովրդագրական ռիսկեր է պարունակում: Կանանց աշխատանքային ռեսուրսի պարապուրդն աշխատաշուկայում նոր ճեղքեր կարող է առաջացնել:

Իրավիճակի նկարագրությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ Հայաստանում գենդերային հիմնախնդիրները լուրջ ուշադրության և հաղթահարման կարիք ունեն:

[15] Հայ ընտանիք (խնդիրներ և հարցադրումներ), Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ), էջ 14-15

1.2 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արդյո՞ք Հայաստանում գենդերային հիմնախնդիրներն արժանանում են բավարար ուշադրության հանրության և պետական մարմինների կողմից: Ոչ:

«Շատ դեպքերում թե՛ հանրության մեջ թե՛ պետական մարմիններում հարցերը չեն դիտարկվում գենդերային տեսանկյունից: Դրանք, այսպես կոչված, gender blind են [գենդերի նկատմամբ կույր են - հեղ.], գենդերային խնդիրները, որպես այդպիսին, չեն նկատվում կամ սխալ ձևով են մեկնաբանվում»[16]*:*

Բարձրագույն կրթություն ունեցողների և մեծապես երևանաբնակների շրջանում անցկացված հարցումը ցույց է տալիս, որ Հայաստանում գենդերային հիմնախնդիրները հրատապ չեն համարվում: Հարյուր հարցվածներից ոչ մեկը որպես Հայաստանի ամենահրատապ հիմնախնդիր չի նշել գենդերային հիմնախնդիրները, իսկ ամենահրատապ երեք խնդիրների շարքում, այն նշել է հարցվողների ընդամենը 3 %-ը[17]:

Վերջին տարիներին գենդերային հիմնահարցերի նկատմամբ պետական քաղաքականություն ձևավորողների և իրականացնողների ուշադրությունը, կարելի է ասել, որոշ չափով մեծացել է:

ՀՀ-ն վավերացրել է մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնցով գենդերային հիմնախնդիրների լուծման պարտավորություններ է ստանձնել: Մասնավորապես.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան
- Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի (1995թ.) հիմնական հանձնարարականները
- Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերը
- ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջները
- ՀՀ միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորություններ

Մի կողմից Հայաստանի կողմից մի շարք միջազգային պարտավորությունների ստանձնումը, մյուս կողմից տարբկեր ՀԿ-ների և միջազգային կառույցների կողմից կազմակերպված քննարկումները, համաժողովները և սեմինարներն իրենց արդյունքն են տվել այն առումով, որ շատ պետական պաշտոնյաների համար գենդերային հիմնահարցերը դադարել են օտար և անհասկանալի լինել:

Վերջին տարիներին մշակվել են պետական քաղաքականության որոշ փաստաթղթեր, որոնք անմիջականորեն ուղղված են գենդերային հիմնահարցերի բարձրաձայն-

---

[16] Գենդերային հիմնահարցերով զբաղվող ՀԿ ներկայացուցիչ

[17] Սույն վերլուծության շրջանակներում հեղինակի կողմից անցկացված էլեկտրոնային հարցում: Այն տարածվել է էլեկտրոնային պլատֆորմների միջոցով, ուստի հարցման մասնակիցները հիմնականում սոցիալական ցանցերում առավել ակտիվ խմբերն են: Հարցվողների մոտ 95 %-ը Երևանի բնակիչներ են և ունեն բարձրագույն կրթություն: Եթե ներկայացված կարծիքը վերաբերում է առավել կրթված և պակաս պատրիարխալ խմբերին, ապա հասարակության մնացած մասում գենդերային հիմնահարցերի առաջնահերթությունն անհամեմատ ավելի ցածր կարող է համարվել:

մանը և հաղթահարմանը: Մասնավորապես կառավարության կողմից ընդունվել է

- Գենդերային քաղաքականության հայեցակարգ
- Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիր

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին օրենքը դեռևս ընդունված չէ, սակայն առաջին ընթերցմամբ քննարկվել է ԱԺ-ում և փորձագիտական կանխատեսումների համաձայն ամենայն հավանականությամբ կընդունվի:

Հայաստանում գենդերային հիմնահարցերի հաղթահարման և դրան ուղղված ծրագրերի իրագործման մեջ ներգրավված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Կրթության և գիտության և այլ նախարարություններ: Սրանցից զատ, վերջին տարիներին ձևավորվել են նաև որոշակի կառույցներ, որոնք կոչված են պետական մարմինների ուշադրության ներքո պահել գենդերային հիմնախնդիրները և մասնակցել դրանց կարգավորմանը և հաղթահարմանը: Նման մարմիններ են.

- Նախագահին կից կանանց խորհուրդ
- Գենդերային թեմատիկ խումբ
- Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով[18]

Անշուշտ այս կառույցների գործունեությունը զերծ չէ քննադատությունից: Մասնավորապես փորձագետներից մեկը նշում է. *«Պետական մակարդակով գենդերային հարցերին անդրադարձողներ, կարելի է ասել, չկան: Կա վարչապետին կից կանանց խորհուրդ, որը ոչինչ չի անում: 2004թ. փորձեցինք մի քանի ՀԿ-ների ու կուսակցական կանանց կողմից ստեղծել կոալիցիա, բայց չհաջողվեց, որովհետև իշխող կուսակցություններից՝ հատկապես ՀՀԿ-ից, կանայք ձևական էին պատրաստակամություն հայտնում. իրականում ոչ մի գործնական քայլ»*[19]:

Հասարակական նախաձեռնությամբ Հայաստանում գործում է նաև վերջին տարիներին ձևավորված «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որը միավորում է գենդերային հիմնահարցերով զբաղվող մի քանի ՀԿ-ներ:

Միջազգային կառույցներից այս հարցերին են անդրադառնում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը,ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն, UNICEF –ը, Բրիտանական խորհուրդը, ԵԱՀԿ-ն և այլ կառույցներ:

Չնայած վերջին տարիներին զգալի առաջընթացին, այնուամենայնիվ գենդերային հիմնախնդիրների հարցում անելիքները դեռևս էականորեն չեն կրճատվում: Ոլորտի շատ փորձագետներ գտնում են, որ դրանք դեռևս բավարար ուշադրության չեն արժանանում:

«Եթե մի 4 տարի առաջ պետական շատ չինովնիկներ ավելի անհավատ ու ստերեոտիպային էին այս հարցերում […], այսօր մտածողությունը մի փոքր փոխվել է. ընդունվել է գենդերայի ազգային ծրագիր, կանանց և տղամարդկանց

[18] Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիր, էջ 5

[19] Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

հավասար իրավունքների ապահովման մասին առաջին քննությամբ անցած օրենք: […] Քաղաքականության բնագավառում փոփոխությունն ակնհայտ է բայց դա իհարկե այն փոփոխությունը չէ, որի արդյունքում գենդերային հարցերը Հայաստանում առաջնային կհամարվեն, այլ, այսպես ասած, միջազգային՝ դրսից պարտադրվող բան է»[20]:

Չնայած որոշակի առաջընթացի, այնուամենայնիվ այսօր գենդերային հարցերի առաջխաղացման առումով շատ փորձագետների կողմից ձախողում համարվում Ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի մերժումը: Տարիներ շարունակ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և այլ գերատեսչությունների հետ համատեղ մշակված օրինագիծը մերժվել է, թեև դրա առանձին դրույթներ, հնարավոր է ընդգրկվեն այլ օրենքների մեջ:

«Կառավարությունն իր պատասխանները չհիմնավորելու իրավունք ունի: Միգուցե մատուցման ձևը այն չի եղել, … միգուցե ընտանեկան բռնության դեմ օրենքի կարևորությունն ավելի լավ կներկայացվեր, եթե ՀԿ-ներից որևէ ներկայացուցիչ ներկայացներ: Բայց, գիտեք, նման իրավունք չկա: … Խնդիրն այն է, որ եթե չես ընդունում նման օրենք, նշանակում է, չես ընդունում, որ նման երևույթ կա: Ընդ որում Ադրբեջանում այսպիսի օրենքի նախագիծ շատ արագ մշակվեց ու ընդունվեց, Վրաստանում, Թուրքիայում ևս: Իսկ Հայաստանում՝ ոչ»[21]:

[20] Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

[21] Գենդերային հիմնահարցերի քաղաքականության մշակմամբ և դրա առաջխաղացմամբ զբաղվող ՀԿ ներկայացուցիչ

Ո՞րն է պատճառը, որ ՀՀ-ում գենդերային հիմնահարցերը, չնայած իրենց սրության, պատշաճ ուշադրության չեն արժանանում:

Ընտանեկան բռնության դեմ օրենքի նախագծի մերժումից հետո ԵԱՀԿ երևանյան գրասենյակը քննարկում կազմակերպեց, որի ընթացքում անդրադարձ կատարվեց օրինագծի մերժման հիմնական պատճառներին: Պատճառներն ու հիմնավորումները տարբեր են. ա) օրենքի կիրառումը կպահանջեր նոր ֆինանսական ներդրումներ, բ)կան այլ ծրագրեր և օրենքներ, որոնց միջոցով հնարավոր է կարգավորել հարցը, գ) նախագծում տեղ գտած որոշ դրույթներ և ձևակերպումներ համահունչ չեն ՀՀ սահմանադրությանը և այլն: Այս և նման պատճառաբանությունները վերաբերում են ոչ միայն ընտանեկան բռնության դեմ օրենքին, այլ շատ գենդերային հիմնահացերի ընդհանրապես:

Ֆինանսական սահմանափակումների առկայության պայմաններում, գենդերային շատ հիմնախնդիրների հաղթահարման ծրագրեր կախված են միջազգային կազմակերպությունների ու ծրագրերի ֆինանսավորումից: Շատ հիմնահարցերի հաղթահարման համար պակասում է համապատասխան կադրային և ադմինիստրատիվ ռեսուրսը:

«Հիմա մեր խնդիրն է ստեղծել ինստիտուցիոնալ բազա, որ կարողանանք շատ հարցերի լուծում տալ մարզերում: Այսինքն մարզերում ստեղծել այս հարցերով լիազոր մարմին՝ պետական կառավարման մարմինների (ի դեմս նախարարությունների ու մարզպետարանների) կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներքո: Այսինքն, մի ստրուկտուրա, որն իր ծրագրային հնարա-

վորություններով կաջակցի խնդրի կարգավորմանը»[22]:

Այնուամենայնիվ , ինչպես համաձայնում է փորձագետների մեծամասնությունը, Հայաստանում գենդերային հիմնախնդիրների անտեսվածությունը մեծապես մշակութային հիմքեր ունի: Հասարակության շատ շերտեր կրում են հիմնականում պատրիարխալ և ավանդական մշակույթ, որոնց առաջարկած արժեքները, նորմերը, կարծրատիպերը և այլն արդեն իսկ սահմանափակում են կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասարությունների հաղթահարումը: Դրանք մշակութորեն պայմաններ են ստեղծվում կանանց խոցելիության համար և նույն մշակույթով այդ խոցելիությունն ամրապնդվում է: Ընդ որում պատրիարխալ արժեքների կրողներ են նաև պետական տարբեր օղակների ներկայացուցիչներ: Այսօր պետական իշխանությունը ներկայացնող կուսակցության հիմնական գաղափարախոսությունը բավականին պատրիարխալ բնույթ ունի:

[22] ՀՀ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ներկայացուցիչ

ԳԼՈՒԽ 2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մշակութային առումով առկա հիմնախնդիրները գնահատելու առանձ-նահատուկ ցուցիչներ են տարածված դիսկուրսները: Տարածված դիսկուրսների վերլուծությունը ցույց է տալիս գենդերային հիմնախնդիրների մասին տեսակետները, տարբեր տեսակետները կիսող կողմերը և կողմերի ու դիսկուրսների միջև երկխոսության հնարավորությունները: Դիսկուրսների վերլուծությունը գնահատում է նաև դիսկուրսիվ զարգացումների, ինչպես նաև գենդերային հիմնահարցերի հաղթահարման հնարավորություններն այս կամ այն հղացքի շրջանակներում: Ուսումնասիրության ընթացքում ուրվագծվել է չորս հիմնական դիսկուրս. ա) պահպանողական, բ) նացիոնալիստական, գ) արևմտյան և դ)հավասարության:

2.1 ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ

«Հայ ընտանիքի, հայ կնոջ, ընտանեկան փոխհարաբերությունների, ընտանիքի և հասարակության կապի մասին առանձին դատողություններ, ուշագրավ մտքեր հանդիպում են հայ շատ հեղինակների երկերում: Ընտանեկան դաստիարակության և հատկապես մոր դաստիարակիչ դերի հետ է կապում Գարեգին Նժդեհը հայոց ապագայի կերտումը. գերագույն է մոր՝ հոգեփոխված և ցեղայնացած հայ կնոջ առաքելությունը՝ նա կոչված է իր երեխայի դաստիարակության միջոցով կառուցելու իր ցեղի ապագան»[23]:

Պահպանողական դիսկուրսը ներթափանցած է հասարակության տարբեր շրջանակներ: Այն լսելի է լրատվամիջոցներով, որոշ ինտելեկտուալ շրջանակներում, առօրեական զրույցներում, ինչպես նաև պաշտոնական շրջանակներում: Պահպանողական դիսկուրսը կարելի է ինչ-որ առումով համարել նաև պաշտոնական դիսկուրս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀԿ իշխող կուսակցության գաղափարախոսությունը, հենված լինելով նժդեհական գաղափարախոսության վրա, շատ հարցերում բավականին պահպանողական մոտեցում է առաջարկում: Բացառություն չեն կազմում նաև գենդերային հիմնախնդիրներին վերաբերող հարցերին:

Քանի որ պահպանողական դիսկուրսին հատուկ է բազմաթիվ գենդերային հարցերի հերքում, արդարացի կլինի այս դիսկուրսը համարել գենդերային պսևդո դիսկուրս:

Քանի որ պահպանողական դիսկուրսին հատուկ է բազմաթիվ գենդերային հարցերի հերքում, արդարացի կլինի այս դիսկուրսը համարել գենդերային պսևդոդիսկուրս: Այս պսևդոդիսկուրսի շրջանակներում, կարելի է ասել, գենդերը որպես հիմնախնդիր գոյություն չունի. կան կանանց և տղամարդկանց դերերի հստակ բաժանումներ, արդեն ձևակերպված իրավունքներ ու պարտականություններ, որոնք նախասահմանված են բնությամբ և

[23] Հայ ընտանիք, էջ 10

ավանդույթով և կանանց վերաբերյալ հարցերը, որոնք բարձրացվում են տարբեր գենդերային հիմնահարցերի շրջանակներում մտացածին են: Ավանդական դիսկուրսում եթե նույնիսկ կա անդրադարձ գենդերային հիմնահարցերին, ապա դրանք արծարծվում են, որպես կանանց հիմնախնդիրներ կամ ընտանեկան հիմնախնդիրներ: Կարելի է ասել նաև, որ այս դիսկուրսն ունի ավտորիտար բնույթ, քանի որ այն դիսկուրս է տրված հասկացությունների սահմաններում: Տրված հասկացությունները սահմանված են որոշակի հեղինակություն ունեցող անհատների կամ խմբերի կողմից, որոնք մերժել չի կարելի, սակայն թույլատրելի է դրա վերատադրությունն ապահովող քննարկումների իրականացումը: Այս դիսկուրսն իրականացվում է հեղինակային աղբյուրներին հղումների միջոցով:

Գենդերային դիսկուրսը միաձուլված է ընտանիքի մասին դիսկուրսին: Գենդերային հարցերը համարվում են ընտանեկան և ոչ թե սոցիալական հիմնախնդիրներ:

Այս պսևդոդիսկուրսի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ գենդերային դիսկուրսը միաձուլված է ընտանիքի մասին դիսկուրսին: Գենդերային հարցերը համարվում են ընտանեկան և ոչ թե սոցիալական հիմնախնդիրներ:

Ճիշտ չի լինի մտածել, որ պահպանողական դիսկուրսը մտահոգ չէ կնոջ երջանկությամբ: Սակայն այս դիսկուրսի շրջանակներում կնոջ երջանկությունը համարվում է ընտանիքը և ընտանիքի ներսում ընտանեկան դերերի լավ կատարման համար ապահովվող պայմաններ առկայությունը:

«Մի ժամանակ կանանց հանրապետական խորհուրդը տարփողեց, որ կազմակերպել է կին առաջնորդների դպրոց և տվել է իր առաջին շրջանավարտները: Հետաքրքիր կլիներ հետևել վերջիններիս ընտանեկան «բախտին», վստահորեն կարելի է ասել, որ նրանք նույնպես լիարժեք ընտանիքի տեր չեն դառնա, ինչպես այժմ Հայաստանում գործող շուրջ երեք տասնյակ կանանց կազմակերպությունների գրեթե բոլոր ղեկավարները, քաղաքական կյանքում լիդերության հայտ ներկայացնող շատ ու շատ հայ տիկնայք»[24]:

Պահպանողական դիսկուրսն իր մեջ մի քանի հղում է պարունակում: Կարելի է տարբերակել երեք հղում՝ դրանք պայմանականորեն անվանելով ավանդական, ազգագրական և սովետական: Այս հղումները հաճախ միմյանց միահյուսված են և փոխլրացնող:

Պահպանողական դիսկուրսն իր ձևակերպումների մեծամասնություններում հղում է կատարում ավանդույթին, նահապետական ընտանիքի ավանդական մոդելին: Այստեղ կնոջ և տղամարդու դերերն ու կարգավիճակներն ունեն հիերարխիկ փոխկապվածություն, հիմնավորված են բնությամբ ու ավանդույթով, դրանց պահպանումը համարվում է կնոջ երջանկության գրավական, իսկ դրանից շեղումը՝ հղի կնոջ դժբախտությամբ:

Ֆոկուս խմբային քննարկումները ցույց են տալիս, որ գենդերի առօրեական դիսկուրսների մեջ շատ տարածված է հենց նահապետական ընտանիքին հղում կատարող պահպանողական դիսկուրսը:

[24] Հայ ընտանիք, էջ 16

Այդ քննարկումների ընթացքում հաճախ կարելի է լսել հետևյալ մտքերը:

«Չնայած տղամարդը տան գլուխն է, կինը վիզն է և ուր ուզի, գլուխն այն կողմն էլ կթեքի»: «Կինը եթե խելոք լինի, այնպես կանի, որ իր ուզածն առաջ տանի»: «Կինը չպետք է տղամար-դուն հավասար փող աշխատի: Այդ դեպ-քում նրա լեզուն երկար է լինում»: «Եկեք ճիշտը խո-սենք, պարզ հարց է, որ տղամարդիկ ավելի խելացի են, քան կանայք: Դրա համար էլ շատ բաներ տղամարդն է որոշում»:

Այն շրջանակներում, որտեղ ընտանիքի ու կին և տղամարդ հարաբերությունների մասին խոսվում է իշխանության լեզվով, գրեթե ընկելելի չէ հավասարության, ազատությունների և իրավունքների հաթությունում գենդերային հիմնահարցերի բարձրացումը:

Ֆոկուս խմբային քննարկումների ընթաց-քում ակնհայտորեն կարելի է նկատել որ կանանց հիմնահարցերը հաճախ քննարկվում են ընտանեկան հարաբերութ-յունների համատեքստում: Այդ համատեքս-տում, որպես կանոն, կնոջը վերագրվում են, տան ներսում խաղացվող ավանդական դերեր, իսկ տղամարդուն՝ տանից դուրս: Ուստի կնոջ՝ հասարակական դերի բարձրացումը գնահատվում է որպես սպառնալիք ընտանիքի կայունությանը:

Մյուս կարևոր դիտարկումն այն է, որ ընտանիքին անդրադարձող լեզուն որպես կանոն իշխանության (հիերարխիկ և ավտորիտար) լեզուն է: Պայքար, հնազան-դություն, ենթարկվածություն, հաղթանակ, հաշտեցում, հանդուրժողականություն, զիջում, զոհաբերություն, իշխանություն… Սրանք այն բառապաշարի հիմնական բառերն են, որոնցով անդրադարձ է կատարվում կին և տղամարդ հարաբերութ-յուններին, ինչպես նաև այդ հարաբե-ր ություններում կանանց հիմնահարցերին: Այս լեզուն ընտանիքում կնոջ և տղամարդու հարաբերությունները ներկայացնում է նաև որպես հոգատար տիրոջ և նվիրված ու շնորհակալ հպատակի հարաբերութ-յուններ: Անհա-մեմատ ավելի հազվադեպ կարելի է լսել փո-խադարձ հար-գանքի և սիրո մասին:

Այն շրջանակնե-րում, որտեղ ըն-տանիքի ու կին և տղամարդ հարաբերությունների մասին խոսվում է իշխանության լեզվով, գրեթե ընկելելի չէ հավասարության, ազատութ-յունների և իրավունքների հաթությունում գենդերային հիմնահարցերի բարձրացումը: Ընդ որում կանանց հիմնահարցերը հավասարության, ազատությունների և իրավունքների հարթություններում դիտար-կելու անընդունակությունը հատուկ է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց խմբերին: Ֆոկուս խմբերի ընթացքում քիչ չէին կանայք, ովքեր արդարացված էին համարում ազատությունների բացակա-յությունը որոշակի պարտականություն-ներից հրաժարվելու նպատակով:

«Ինձ ձեռք չի տալիս հավասարությունը, ես չեմ ուզում, որ ընտանիքը պահելու բեռն ինձ վրա լինի, տղամարդը պետք է այդ գործն անի»:

Ավանդական դիսկուրսի շրջանակներում հաճախ արդարացվում է կանանց նկատմամբ բռնությունը կամ անհավա-սարությունը: *«Ոչ մեկի առանց պատճառի չեն ապտակում: Կինը մի քիչ էլ պետք ա խելոք լինի, որ հասկանա, թե որտեղ պետք*

ա զիջի»: Երբեմն նույնիսկ բռնությունը դատապարտող լեզուն սնվում է բռնության նկատմամբ հանդուրժողականությանությունից: Դրա վառ օրինակներից են նման արտահայտությունները, որոնց հաճախ կարելի է հանդիպել առօրեական դիսկուրսներում. *«Մեզնից ոչ ոք չի կարող գլուխ գովալ, որ իր կյանքում մի ապտակ չի կերել: Բայց մի ապտակը մի բան է, իսկ պարբերաբար ծեծելն այլ բան է»:*

Ինչպես արդեն նշվել է վերը պահպանողական պսևդոդիսկուրսին հատուկ է գենդերային հիմնահարցերի ժխտումը: Այս մոտեցումը, որպես կանոն, սնվում է պահպանողական դիսկուրսի մեկ այլ հղումից, որը պայմանականորեն կարելի է անվանել ազգագրական:

Ազգագրագետների կողմից նկարագրված նահապետական ընտանիքում կինը ներկայացված է որպես ընտանիքում բարձր դիրք զբաղեցնող: Նահապետական ընտանիքում կինը համարվում է «սրբություն», նրան հարգում են, մեծարում են, նրա խոսքին հետևում են, նրա մասին հոգ են տանում և այլն: Ազգագրագետների կողմից ինչ-որ չափով ռոմանտիզացված ներկայացվող այս նկարագրությունը քողարկում է կնոջ «սրբացված» և «մեծարված» դիրքի սահմանափակումները:
Նկարագրությունը քողարկում է նման վերաբերմունքի չարժանանալու «ավանդաբար արդարացված» դեպքերը: Այն քողարկում և լռության է մատնում նաև ընտանիքներում ծագող բազմաթիվ հիմնախնդիրներ՝ ներառյալ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հարցը:

Գենդերային հիմնախնդիրների արծարծումը պահպանողական դիսկուրսում ենթակա է մերժման և տապալման:

Մյուս հղումը, որ ունի պահպանողական պսևդոդիսկուրսը պայմանականորեն սովետական անվանված հղումնէ: Սա ևս սերտորեն կապված է ազգագրական հղման հետ: Այն հիմնված էր ազգագրության կողմից վերարտադրվող ավանդական մոդելի վրա և դրա շարունակությունն էր՝ որոշակի մոդեռնիզացիայի ենթարկված: Սովետահայկական մոդելում ընտանիքը դիտարկվում էր, որպես հասարակության փոքրագույն բջիջ, որը պատասխանատու էր «հասարակության արժանի զավակներ դաստիարակելու», հասարակական համերաշխությունը պահպանելու և սոցիալիստական արժեքները վերարտադրելու համար: Այս համատեքստում կինը դիտարկվում էր, որպես ամենամեծ պատասխանատուն, ով իր հասարակական գործունեությունից զատ պետք է մեծ հոգատարություն դրսևորեր ամուսնու և երեխաների նկատմամբ, պահպաներ ընտանեկան կյանքի խաղաղությունը, համերաշխությունը և տոնականությունը:

Սովետական ժամանակաշրջանում կնոջը ֆորմալ իրավահավասարություն էր տրվում նրան հանրային և արտադրական գործունեության մեջ ներգրավելու համար: Ավելի պատկերավոր ասած՝ նրան գործարաններում բերելու համար: Սովետական մոդելում կինը, թեև ինչ-որ չափով դուրս էր գալիս ընտանիքից, բայց այնուամենայնիվ միայն այնքանով, որքանով դա չէր խանգառի նրան իր

ավանդական դերերի կատարմանը: Ուստի կնոջ համար, օրինակ, հարմար աշխատանքներ էին համարվում ուսուցչի աշխատանքը, որը նրան հնարավորություն էր տալիս օրվա կեսն անցկացնել աշխատավայրում, իսկ կեսը՝ տանը ընտանիքի հետ:

Ինչպես ավանդական և ազգագրական այնպես և սովետական դիսկուրսում գենդերը որպես այդպիսին պրոբլեմիզացիայի չի ենթարկվում: Այստեղ ևս կարելի է խոսել միայն կանանց վերաբերող հիմնախնդիրների մասին: Իսկ այդպիսիք արծարվում են այնքանով, և այն տեսանկյունից, որքանով և որ տեսանկյունից կինը հնարավորություն ունի/չունի իր մոր և կնոջ դերը սովետական հասարակության և իր ընտանիքի առջև կատարելու համար:

Փաստորեն պահպանողական դիսկուրսը, որը հղումներ է անում ավանդույթին, ազգագրությանը և սովետահայկական փորձին ավելի շուտ կարելի է համարել պսևդո դիսկուրս: Այն ունի ուրույն լեզու (իշխանության լեզու) և հարցերի քննարկման ուրույն հարթություններ (ընտանիք, ավանդույթ), որոնք ավելի շատ կոչված են հերքելու գենդերային հիմնահարցերը, քան դրանք վեր հանելու: Գենդերային հիմնախնդիրների արծարծումը պահպանողական դիսկուրսում ենթակա է մերժման և տապալման:

2.2 ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ

«Հայ իգական սեռը նախ մայր է, կին, ապա նոր միայն գիտնական, բժիշկ, պատգամավոր, բանվորուհի, մանկավարժուհի… Հայ իգական սեռը նախ բարոյական արժեք է, ապա նոր միայն՝ ֆիզիկական մարմին՝ իր բնախոսական պահանջներով: Հայ իգական սեռը նախ հայ է, հետո նոր միայն կին»[25]:

Ինչպես ակնհայտորեն մատնացույց է անում վերոնշյալ մեջբերումը որոշ դերպ-քերում գենդերային դիսկուրսը սերտորեն միահյուսված է նացիոնալիստական դիսկուրսին: Այս դեպքում պայմանականորեն կարելի է խոսել գենդերի նացիոնա-լիստական դիսկուրսի մասին: Հայաստանի նացիոնալիստական դիսկուրսների պայ-մաններում այն ևս հանդես է գալիս որպես պսևդո դիսկուրս: Պատճառն այն է, որ նացիոնալիստական դիսկուրսը սերտորեն կապված է պահպանողական դիսկուրսի հետ և դրա պես ավելի շատ միտված է գենդերային հիմնահարցերը մերժելուն, քան արծարծելուն:

Հայաստանում գենդերային դիսկուրսը սերտորեն միահյուսված է նացիոնալիստական դիսկուրսին:

Նացիոնալիստական պսևդո դիսկուրսը նույնպես առկա է շատ շրջանակներում՝ այդ թվում նաև պաշտոնական և հանրային (որոշ լրատվամիջոցներում, հասարակական կազմակերպութ-յուններում և այլն): Թեև հաճախ կարելի է հանդիպել նաև առօրեականությունում, այնուամենայնիվ

[25] Հայ ընտանիք, էջ 31

այն պակաս ակտիվ առօրեական դիսկուրս է, քանի պահպանողականը:

Շրջանակները, որոնք առանձնահատուկ տեղ ու դիրք են տալիս հայ ազգին և հայկական մշակույթին, դրա մեջ կարևորում են նաև ընտանիքը, որպես հայկականության դրսևորում և, միևնույն ժամանակ, հայկականության պաշտպան:

««Հանուն ինչի՞ ճնշենք, զսպենք, խեղենք, հաշմենք 16 տարեկանից զգացնել տվող սեքսուալ սեռական մղումը», - հարցնում էր տարիներ առաջ մի հոդվածագիր, որը, ցավոք, նաև բժիշկ էր: Հանուն նրա, որ հայ մնալու համար՝ պահպանենք հազարամյակների խորքից ժառանգած մեր բարոյական որակները, որ ապագայում ամուր ընտանիքներ ունենանք, հանուն նրա, որ մեր դեռահաս աղջիկները պարսիկների կամ թուրքերի հարճերը չդառնան, որ որբ մանուկներ չունենանք»[26]:

Այս դիսկուրսի շրջանակներում հաճախ կարելի է հանդիպել «հայ ընտանիք», «հայ կին», «հայ մայր» ձևակերպումները, որոնք հատուկ որակներ են ենթադրում: Որպես կանոն այդ որակները հենված են ավանդական և պատրիարխալ արժեքների վրա: Այս համատեքստում, գենդերային հիմնահարցերը համարվում են օտարոտի: Նացիոնալիստական պսևդոդիսկուրսի առավել ծայրահեղական մոտեցումներում գենդերային հիմնահարցերի բարձրացումը նույնիսկ համարվում է դավադրություն, որը արևմտյան հասարակությունների կողմից ներդրված է հայ հասարակություն այն պառակտելու, հայերի ազգային արժանիքները խաթարելու, և, մասնավորապես, հայ ընտանիքը քայքայելու միտումով:

Ըստ որոշ փորձագետների այս դիսկուրսը տարիների ընթացքում որոշ չափով մեղմանում է՝ այնուամենայնիվ, պահպանելով իր արդիականությունը նաև այժմ. *«Երբ մենք օգտագործում էինք «ընտանեկան բռնություն» հասկացությունը, շատերը դա չէին հասկանում: Գտնում էին, որ այն մեր կողմից հնարած մի բան է, որ իրականում հայ ընտանիքում չի կարող լինել բռնություն, նման բառակապակցությունը հարիր չէ մեր ազգին, ընտանիքին և այլն: Կարծիք կար, թե հանդես ենք գալիս նման խնդիրների անունից զուտ գրանտներ շահելու համար և այլն: Հիմա իրավիճակը մի քիչ փոխվել է»*[27]:

Ինչպես պահպանողական, այնպես էլ արդի նացիոնալիստական դիսկուրսի շրջանակներում գենդերային հիմնահարցերի քննարկումը ենթակա է տապալման: Այնուամենայնիվ դա կարող է հնարավոր դառնալ Հայաստանում նացիոնալիստական դիսկուրսի փոփոխման դեպքում: Եթե այն հիմնված լինի, ոչ թե էթնիկ ավանդական և պատրիարխալ արժեքների պահմանման, այլ ազգային պետության զարգացման գաղափարների վրա, ապա այդ դեպքում գենդերային հիմնահարցերը կարող են դառնան նման նացիոնալիստական դիսկուրսի օրակարգային խնդիրներ:

[26] Հայ ընտանիք, էջ 23

[27] Գենդերային հիմնահարցերով զբաղվող ՀԿ ներկայացուցիչ

2.3 ԱՐԵՎՄՏՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ

«Ավանդական շատ բաներ կան, որ նպաստում են գենդերային հարցերի չլուծված մնալուն: Պետք է տղամարդու ու կնոջ միջև տարբերություն լինի, բայց ոչ իրավունքների անհավասարություն: Ամեն մեկն ունի իր տեղն ու նշանակությունը.: Բայց ի տարբերություն տարիներ առաջվա, հիմա դիսկուրսը փոխվել է, արդեն խոսում են այնպիսի բաների մասին, ինչպիսիք նախկինում ամոթ կհամարեին, ընտանեկան բռնությունը, օրինակ: Նախկինում ասում էին, ինչ կարիք կա մենք մեզ խայտառակենք, մեր թերությունները ջրի երես հանենք: Կամ հիմա արդեն կան խոսակցություններ կին առաջնորդների մասին, քվոտայի իրավունք ունենալու մասին և այլն»[28]:

Այս դիսկուրսում է, որ գենդերային հարցերն արծարծվում են ըստ էության: Այստեղ արևմտյան անունն արդարացված է այն պատճառով, որ դիսկուրսը Հայաստան է ներթափանցել արևմուքից և պահպանվում է նույն ձևակերպումներով և առաջնահերթություններով ինչ և առկա է արևմտյան երկրներում:

Այս դիսկուրսի շրջանակներում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են իրավահավասարությունը, օրենքով կնոջ պաշտպանվածությունն անհավասարությունից, հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, նրա ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված սահմանափակումների փոխհատուցումը, հասարակական սոլիդարությունը կնոջ՝ վերարտադրողական ֆունկցիայի իրագործման հանդեպ: Այս դիսկուրսում գենդերային հարցերը դուրս են գալիս ընտանիքի շրջանակներից դառնալով հասարակական ինստիտուտների կարգավորման հարցեր:

Այս դիսկուրսը տարածված է հիմանկանում գենդերային հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների, ինչպես նաև որոշ ինտելեկտուալների շրջնակներում: Որքան էլ հակասական թվա, այնուամենայնիվ այս դիսկուրսը նաև պաշտոնական դիսկուրս է, իսկ ավելի ստույգ կլինի ասել պաշտոնական գրավոր դիսկուրս:

Վավերացնելով որոշակի միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ և ստանձնելով որոշակի պարտավորություններ միջազգային կառույցների առջև՝ ՀՀ կառավարությունը և իշխանության այլ օղակներ հաշվետու են որոշակի հարցերում բարեփոխումների իրագործման համար: Այդ պարտավորությունների շարքում են նաև գենդերային հիմնահարցերը՝ մասնավորապես որոշ օրինագծերի հարմոնիզացիան միջազգային իրավունքի նորմերին, օրենքների գործառնությունն ապահովող ինստիտուցիոնալ բարեփոխումները և այլն: Օրինակ՝ ՀՀ Կառավարության Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը, որպես իր առաջին նպատակ ձևակերպում է հետևյալը. «Ապահովել գենդերային բռնության դեմ պայքարի վերաբերյալ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի համաժողովի հիմնական հանձնարարականների, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտա-

[28] Գենդերային հիմնահարցերով զբաղվող ՀԿ ներկայացուցիչ

վորությունների կատարումը»[29]: Թե՛ Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. Ռազմավարական ծրագիրը և թե՛ գենդերային հիմնախնդիրներին անդրադարձող այլ պետական փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանց հեղինակները, գոնե լեզվական ձևակերպումների մակարդակում մնում են գենդերային արևմտյան դիսկուրսի շրջանակներում, տիրապետում են դիսկուրսի լեզվին և առաջնահերթությունների: Այնուամենայնիվ, մի շարք փորձագիտական կարծիքների համաձայն, դրանք ավելին չեն, քան զուտ ձևակերպումներ:

Վերջին տարիներին Հայաստանում գենդերային հիմնահարցերին անդրադարձող հիմնական փաստաթղթերը, գոնե ձևակերպումների մակարդակում գենդերային արևմտյան դիսկուրսի շրջանակներում են:

«*Մշակվում և ընդունվում են գեղեցիկ ձևակերպումներով ծրագրեր, օրինակ. Գենդերային ռազմավարության 2011-2015 պլանը, բայց ոչ վերահսկողություն կա, ոչ էլ գնահատում: Ամեն տարի Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը հաշվետվություններ է ներկայացնում: Երբ կարդում ես, թվում է՝ գենդերի ոլորտում ամեն ինչ կարգին է: Բայց կա մեծ տարբերություն լավ ձևակերպված փաստաթղթերի ու դրանց իրականացման միջև»:*

Որպես առօրեական դիսկուրս գենդերի արևմտյան դիսկուրսը միանգամայն հակադիր գնահատականներ է ստանում՝ ձուլվելով նացիոնալիստական պսևդոդիսկուրսին և սնելով այն:

Մի կողմից գենդերի արևմտյան դիսկուրսը հարմար հարթակ է պետական որոշ շրջանակներում գենդերային հիմնահարցերի բարձրացման համար: Մյուս կողմից, հաշվի առնելով պետական շրջանակներում առկա պահպանողական և մինչև անգամ նացիոնալիստական դիսկուրսների առկայությունը, ինչպես նաև հանրության շրջանում արևմտյան դիսկուրսի պակաս ժողովրդականությունը և ընդունվածությունը, այն ունի որոշակի սահմանափակումներ:

[29] Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ ռազմավարական ծրագիր, էջ 1

2.4. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍ

«Օրենքը կանանց չի արգելում պատգամավոր դառնալ: Եթե հավասարություն են ուզում, թող տղամարդկանց պես մրցակցեն, ով իսկապես ուժեղ է, նա կանցնի: Էլ ինչ հավասարություն, եթե կանանց պետք ա առավելություններ տրվեն»:

Մյուս գենդերային դիսկուրսը պայմանականորեն կարելի է անվանել հավասարության դիսկուրս: Այն հիմնված է կանանց և տղամարդկանց միջև հավասարության գաղափարի վրա: Այն մերժում է այս կամ այն հարցում կանանց տրվող առավելությունը, մասնավորապես՝ ինչոր ոլորտներ կանանց մուտքն ապահովելու համար նախատեսված քվոտաների սահմանումը:

Հավասարության դիսրկուրսը գենդերային հիմնահարցերն ավելի շատ դիտարկում է որպես անհատական, քան սոցիալական հիմնահարցեր:

Թեև այս դիսկուրսը հենվում է կանանց և տղամարդկանց միջև հավասարության գաղափարի վրա, այնուամենայնիվ սկեպտիկ է այդ հարցում: Այն հավասարության նշան է դնում ոչ միայն հնարավորությունների միջև, այլ նաև դերերի, կարողությունների, հնարավորություններ և այլն: Այս դիսկուրսում հնարավորությունների հավասարությունը և իրավահավասարությունը միախառնվում են դերերի միջև նույնությանը:

Այս դիսկուրսի առանձնահատկություններից է նաև այն, որ գենդերային հիմնահարցերը դիտարկում է ավելի շատ անհատական հարթությունում, քան սոցիալական: Այս դիսկուրսում գենդերային հիմնահարցերը համարվում են անհատական որոշումների, անհատական առաջխաղացումների հարցեր և ոչ թե սոցիալական սոլիդարության միջոցով կարգավորվող:

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում հնչող կարծիքներից մեկը պնդում է. *«Բայց բնական է, որ գործատուն, պետք է շահագրգռված չլինի երիտասարդ, նոր ամուսնացած աղջկան աշխատանքի վերցնել: Այո նա մի քանի ամսից կարող է հղիանալ և դու նորից կանգնում ես աշխատող գտնելու խնդրի առջև»:*

Նման կարծիքները, որոնք ներկայացնում են հավասարության դիսկուրսը, այնուամենայնիվ կարող են փոխառնչվել արևմտյան դիսկուրսի հետ: Դրանք կարող են երկխոսել արևմտյան դիսկուրսի հետ: Եվ այդ երկխոսության ընդհանուր հիմքը պետք է լինի ռացիոնալության և նպատակահարմարության լեզուն: Ի տարբերություն պահպանողական և նացիոնալիստական դիսկուրսների, որոնք հիմնականում հենված են իռացիոնալ արժեքների, հավատալիքների, կարծրատիպերի վրա, հավասարության դիսկուրսը հենված է նպատակահարմարության և ռացիոնալության վրա: Ուստի նրան հակադարձելը կարող է կատարվել տնտեսական, ժողովրդագրական կամ այլ հարթություններում գենդերային հիմնահարցերի դրական կամ բացասական ազդեցությունների մատնանշմամբ և քննարկմամբ:

Փաստորեն հավասարության դիսկուրսը կարելի է համարել ավելի ճկուն այն

առումով, որ պակաս կարծրատիպային արժեքների վրա է հիմնված: Այն, ի համեմատ ավանդական և նացիոնալիստական դիսկուրսների, ավելի բաց է փոխակերպումների նկատմամբ: Առավել ևս, որ այս դիսկուրսի առաջ քաշած հարցադրումներից շատերի պատասխանները կարելի է գտնել նույն արևմտյան դիսկուրսի շրջանակներում, գենդերային և ֆեմինիստական հիմնահարցերի բազմաթիվ հետազոտությունների և տեսությունների շրջանակում: Ուստի արևմտյան դիսկուրսի ընդլայնման և համակիրներ գտնելու ամենամեծ հակվածություն ունեցող սեգմենտը հավասարության դիսկուրսը կիսողներն են: Նրանց հետ երկխոսությունը հնարավոր է և հնարավոր է, եթե արևմտյան դիսկուրսն իր տեսակետների առաջխաղացման համար ներկայացնի ժողովրդագրական, տնտեսական և կյանքի որակի վրա գենդերային հարցերի ազդեցության փաստարկված հիմնավորումներ:

ԳԼՈՒԽ 3. ԳԵՆԴԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԱՅԻՆ ԴԱՇՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հասարակությունում առկա դիսկուրսը ոչ միայն ցույց է տալիս, թե գենդերային հիմնահարցերի վերաբերյալ ինչ դիրքորոշումներ և առաջնահերթություններ կան, այլ նաև կարող է դաշտ ապահովել դրանց համապատասխան տեսլականներ ձևավորելու համար:

Նոր դիսկուրսի ձևավորումը նոր տեսակետներ է առաջարկում, որոնք կարող են ուղղորդել գենդերային հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված հղացքները:

Այս առումով Հայաստանում ներկա իրավիճակի վերլուծությունը մի քանի հնարավոր զարգացումների մասին է հուշում՝ ստատուս քվոի պահպանում, առկա արևմտյան դիսկուրսի տարածում, նոր դիսկուրսների զարգացում:

Ստատուս քվո: Ի՞նչ հեռանկար կարող է ունենալ գենդերային հիմնահարցերի հաղթահարումը ներկա դիսկուրսիվ զարգացումների պայմաններում:

Միջազգային փաստաթղթերի վավերացման և միջազգային կառույցների առջև պարտավորություններ ստանձնած լինելու պայմաններում գենդերային շատ հիմնահարցեր գտնում են և կշարունակեն գտնել իրենց ֆորմալ ձևակերպումները: Իրավական նորմերի ձևակերպումները ժամանակի ընթացքում կարող են առաջացնել որոշակի պրակտիկաներ, որոնք հնարավոր է գենդերային հիմնահարցերի և հարաբերությունների նախադեպեր դառնան:

Այնուամենայնիվ, կան սահմանափակումներ, որոնք կխոչընդոտեն ու կդանդաղեցնեն արևմտյան դիսկուրսի շրջանակներում առաջարկվող կանանց և տղամարդկանց հնարավորությունների և իրավունքների հավասարության ապահովումը: Այդպիսի խոչընդոտներ են հասարակությունում և պետական շատ օղակներում տարածված պահպանողական և նացիոնալիստական դիսկուրսները և դրանց վերարտադրությունը: *Սա մեծ խոչընդոտ է, որպեսզի ձևավորված իրավական նորմը փոխի առօրեական պրակտիկաները:*

Էական խոչընդոտներից է նաև համապատասխան գործիքների և ինստիտուցիոնալ կառույցների բացակայությունը, կադրային և ադմինիստրատիվ սահմանափակումները, որոնց պայմաններում միայն թղթի վրա ձևակերպված նպատակադրումները հնարավոր է կյանքի կոչվեն:

Արևմտյան դիսկուրսի տարածում: Արևմտյան դիսկուրսը Հայաստանում տարածված գենդերային դիսկուրսներից ամենանպաստավորն է գենդերային հիմնահարցերին անդրադառնալու տեսակետից: Դրա տարածումը կարող է օգնել գենդերային շատ հիմնահարցերի հաղթահարմանը, կանանց իրավունքների և հնարավորությունների մեծացմանը: Այս դիսկուրսի տարածումը հնարավոր է դրա տեսակետները կիսող շրջանակների ընդլայնման միջոցով: Այս դիսկուրսը համակիրների իր շրջանակը կարող է ընդլայնել հավասարության դիսկուրսի հետ երկխոսության միջոցով: Մյուս երկու՝ պահպանողական և նացիոնալիստական դիսկուրսները, լինելով ոչ միայն

գենդերային պսևդո, այլ նաև հակա-դիսկուրսներ, գենդերային հիմնահարցերի քննարկումների միջոցով, որպես կանոն, վերարտադրում են հակագենդերային տեսակետները: Ուստի այս դիսկուրսի մեջ ներքաշվող գենդերային հարցերի վերաբերյալ ցանկացած քննարկում իր մեջ պարունակում է ռիսկ՝ հանգելու «Արդյո՞ք կանայք նույնքան խելացի են ինչպես տղամարդիկ» կամ «Մենք կկորցնենք մեր ինքնությունը և կկործանվենք» հարցադրումներին և պատասխաններին:

Մյուս կողմից, արևմտյան դիսկուրսի տարածումը ևս ունի վերանայման կարիք: Վերանայման կարիք ունեն թե՛ առաջարկվող տեսակետները և թե՛ դրանց տարածման մեխանիզմները: Դիսկուրսի տարածումը մի կողմից գործուն է դառնում եթե հենվում է առկա իրականության և մշակույթի վրա, մյուս կողմից այս ստրատեգիան կարող է տանել նույն իրականության վերարտադրությանը: Մի կողմից, հենվելով այսօր Հայաստանում կապիտալիստական արժեքների գործունության վրա, արևմտյան դիսկուրսը կարող է տարածվել, եթե հենված լինի տնտեսական հիմնավորումների վրա: Մյուս կողմից, այս մոտեցումը կարող է հանգեցնել գենդերային այնպիսի հիմնահարցերի, որոնք տարածված են Արևմուտքի կապիտալիստական շատ երկրներում: Շատ զարգացած երկրներ ապահովում են կնոջ հասանելիությունը տնտեսական և այլ ռեսուրսներին, բայց սրանով գենդերային հիմնահարցերը ոչ թե հաղթահարվում են, այլ փոխում են իրենց բնույթը: Արևմուտքում ձևավորված շատ դիսկուրսներ, այնուամենայնիվ, կանանց հիմնահարցերը հաղթահարում են՝ տղամարդկանց պրակտիկաները և ֆորմաները կնոջն առաջարկելով:

Մյուս կողմից, արևմտյան դիսկուրսի տարածումը Հայաստանում հիմնականում կատարվում է այնպիսի մեխանիզմներով, ինչպիսիք են սեմինարները, դասընթացները, թրեյնինգները, սոցիալական հոլովակները և այլն: Սրանք հիմնականում քարոզչական բնույթ ունեն: Իսկ քարոզչությունը, հատկապես բարձր ինտենսիվության պայմաններում, հակազդեցություն է առաջացնում: Դրա միջոցով առաջարկվող բանաձևերը ռեդուկցվում են, պարզունակացվում և դադարում ուշադրություն գրավել, մտածել տալ:

Նոր դիսկուրսների զարգացում: Արևմտյան դիսկուրսներն ունեն իրենց սահմանափակությունները: Հայաստան ներմուծվելով՝ դրանք առավել ընդհանրացվում են և պարզունակացվում: Հայաստանում գենդերային հիմնահարցերը քիչ են բարձրաձայնվում դիսկուրսիվ մակարդակում: Որոշ քննարկումներ կարելի է գտնել արվեստի ոլորտում՝ հիմնականում պատկերային, ավելի պակաս գրականության մեջ: Սոցիալական գիտությունն է՛լ ավելի սահմանափակ է անդրադառնում այդ հարցերին՝ հիմնականում դրանք ներդնելով սոցիալական ապահովության, տնտեսական զարգացման կամ քաղաքականության ոլորտ: Փիլիսոփայությունը, կարելի է ասել, ընդհանրապես լռում է գենդերային հարցերի վերաբերյալ: Դիսկուրսիվ մակարդակում գենդերային հարցերի շրջանառության պասիվությունը հանգեցնում է նրան, որ հաճախ գենդերային հարցերին վերաբերող շատ ձևակերպումներ կրկնում են այս կամ այն երկրից վերցված ֆորմաները: Նույն պատճառով գենդերային հարցերով զբաղվող շատ կազմակերպություններ և

անհատներ չեն ներկայացնում իրենց ծրագրերի և նախաձեռնությունների առաջխաղացման համար անհրաժեշտ փիլիսոփայական և դիսկուրսիվ բազան:

Նոր դիսկուրսների ձևավորումը և ընդհանարպես գենդերային հիմնահարցերի դիսկուրսիվ քննարկումները կարող են նպաստել գենդերային հարցերի հաղթահարման արդյունավետ ֆորմաների ձևակերպմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀՀ-ում առկա բազմաթիվ գենդերային հիմնախնդիրներ պատշաճ ուշադրության չեն արժանանում ո՛չ պետական կառույցների, ո՛չ հանրային տարբեր օղակների կողմից: Պատճառները մի քանիսն են սկսած ֆինանսական սահմանափակություններից մինչև հասարակության մեջ արմատացած մշակութային պատրիարխալ պատկերացումներն ու տեսակետերը:

Մշակութային առումով հատկապես ազդեցիկ են տարածված գերակայող դիսկուրսները, որոնց շրջանակներում գենդերային հիմնահարցերը ավելի հաճախ փակուղի են մտնում քան ռելևանտ լուծումներ գտնում:

Գենդերային ամենատարածված պահպանողական և նացիոնալիստական պսևդո դրսկուրսներրն ավելի հաճախ հակադիսկուրսի բնույթ են ստանում:

Պահպանողական դիսկուրսի շրջանակներում եթե կինը նույնիսկ իր «առաքելությամբ» դուրս է գալիս տան պատերի սահմաններից և հանրային գործունեություն իրականացնելու հնարավորություն է ձեռք բերում, այնուամենայնիվ դրա հնարավորությունը տրվում է այնքանով, որքանով այն չի խանգառում կնոջ ավանդական դերերի իրականացմանը:

Նացիոնալիստական դիսկուրսը ևս գենդերային հիմնահարցերը քննում է մեծապես ընտանիքապահպան և ազգապահպան տեսակենից: Որպես ազգային արժեքներ հիմնականում հռչակելով ավանդական պատրիարխալ արժեքները՝ դրանց պահպանումը համարում է ազգային անվտանգության գրավական, իսկ գենդերային հիմնահարցերի բարձրաձայնումը՝ ազգային սպառնալիք:

Գենդերային երրորդ տարածված դիսկուրսը, այսպես կոչված, հավասարության դիսկուրսն է, որն ի տարբերություն վերոնշյալ երկու պսևդո դիսկուրսների իրապես քննում է գենդերային հիմնահարցերը և ոչ թե մերժում է դրանք: Սակայն, այն ելնում է գենդերային հավասարության ապրիորի գաղափարից՝ այդպիսով մերժելով այն որպես նպատակ և այսպիսով մերժելով կանանց տրվող առավելությունները կամ կանանց նկատմամբ դրական խտրականությունը:

Հայաստանում առկա գենդերային հիմնահարցերը հիմնականում լուծում են գտնում այսպես կոչված արևմտյան դիսկուրսի շրջանակներում: Այն, որպես կանոն, ներթափանցում է Հայաստան միջազգային կառույցների և ծրագրերի շրջանակներում նախաձեռնվող կամ նրանց կողմից ֆինանսավորվող պետական և հասարակական միջոցառումների ու ծրագրերի միջոցով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գենդերային հիմնահարցերին ուղղված պետական քաղաքականության հիմնական խթանն այդ հարցում ստանձնած միջազգային պարտավորություններն են:

Թեև այսօր արևմտյան դիսկուրսը ՀՀ գենդերային հիմնահարցերին անդրադարձող, կարելի է ասել, միակ դիսկուրսն է, այնուամենայնիվ, այն ունի իր սահմանափակումները: Մասնավորապես, չնայած արևմուտքում զարգացող գենդերային բազմաթիվ դիսկուրսների առկայության, Հայաստանում դրանք շրջանառվում են հիմնականում ընդհանրացված,

ռեդուկցված, իսկ հաճախ նաև պարզունակացված: Դրանց տարածման հիմնական մեխանիզմները սեմինարների, դասընթացների, սոցիալական հոլովակների բնույթ ունեն, որոնք ավելի շատ քարոզչության ձևաչափ են ներկայացնում, քան քննարկումներ առաջ քաշելու:

ՀՀ գենդերային հիմնահարցերի դիսկուրսային վերլուծության այս հիմնական եզրակացությունները մի քանի առաջարկների հնարավորություն են տալիս:

Առաջարկ 1.

Անհրաժեշտ է գենդերային նոր դիսկուրսների զարգացման խթանում: Այս առումով կարևոր է գենդերային հարցերին անդրադարձող ծրագրերի ֆորմատը սեմինարներից և դասընթացներից ու քարոզչական այլ միջոցներից վերածել քննարկումներ խթանող ֆորմատների: Որպես այդպիսիք կարող են լինել գենդերային հիմնահարցերի վերաբերյալ տեսակետների հնչեցման նոր պլատֆորմների ձևավորումը, վերլուծական աշխատանքների խթանումը, ինչպես նաև գիտական և հանրային քննարկումների կազմակերպումը: Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ քննարկումները պետք է ոչ միայն նոր ֆորմատներ, այլ նաև նոր թեմաներ առաջարկեն: Դրանցում սոցիալական կոնկրետ հիմնախնդիրներից զատ հատուկ տեղ պետք է ունենա գենդերային հիմնախնդիրների մեկնաբանությունը, գենդերային հիմնահարցերի հայեցակետային, դիսկուրսիվ և փիլիսոփայական ուղղվածության հարցերի քննարկումը:

Առաջարկ 2.

Քանի որ կարող է երկար ժամանակ պահանջվել, որպեսզի նոր դիսկուրսների ձևակերպման գործընթացն իր արդյունքը տա, ուստի միաժամանակ անհրաժեշտ է զարգացնել նաև արևմտյան դիսկուրսի շրջանակներում իրականացվող նախաձեռնությունները: Ուստի…

Առաջարկ 2.1 Պետք է ստեղծվեն արևմտյան տեսակետը ներկայացնող տեքստեր, որոնք ընկալելի կդարձնեն դիսկուրսի կողմից առաջ քաշվող արժեքները և կներկայացնեն դրանց դրական կողմերը, կնպաստեն ազգային արժեքների հանդեպ դրանց վտանգավորության մասին պահպանողական ու նացիոնալիստական շրջանակների հակադրությունը մեղմելուն:

Պետք է ընդլայնել դիսկուրսի համակիրների շրջանակը: Այդ շրջանակը կարող է համալրվել ոչ թե հաղթահարելով պատրիարխալ և նացիոնալիստական դիսկուրսը, այլ նրան ավելի ազդեցիկ և տարածված այլընտրանք ստեղծելով: Ոլորտի ակտիվիստների առաջնային խնդիր պետք է լինի ոչ թե պատրիարխալ և նացիոնալիստական դիսկուրսների հաղթահարումը՝ դրանց հետ պոլեմիկայի և դրանք փոխելու միջոցով (քարոզչություն, դասընթացնել և նմանատիպ այլ միջոցառումներ կազմակերպելով), այլ սեփական դիսկուրսը հասարակական ավելի լայն շրջանակներին ընկալելի ու հասանելի դարձնելը և տարածման համար նոր ուղիներ հարթելը: Դա ենթադրում է սեփական տեսակետների ձևակերպում և տարածում տարբեր տեքստերի միջոցով՝ գրավոր, պատկերային և այլն:

Առաջարկ 2.2 Ստեղծել արևմտյան դիսկուրսի առաջխաղացմանը նպաստող վերլուծական տեքստեր

Արևմտյան դիսկուրսը երկխոսության հնարավորություն ունի միայն հավասարության դիսկուրսը կիսողների հետ: Այս դիսկուրսը, ի համեմատ ավանդական և նացիոնալիստական դիսկուրսների, ավելի բաց է փոխակերպումների նկատմամբ: Ուստի արևմտյան դիսկուրսի ընդլայնման և համակիրներ գտնելու ամենամեծ հակվածություն ունեցող սեգմենտը հավասարության դիսկուրսը կիսողներն են: Նրանց հետ երկխոսության լեզուն պետք է լինի ավելի փաստարկված: Ուստի այս նպատակի համար ստեղծվող տեքստերը պետք է լինեն վերլուծական բնույթի: Արևմտյան դիսկուրսն իր տեսակետների առաջխաղացման համար պետք է ներկայացնի ժողովրդագրական, տնտեսական և կյանքի որակի վրա ազդող այլ հարթությունների վրա գենդերային հարցերի ազդեցության փաստարկված հիմնավորումներ:

Առաջարկ 3

Գենդերային հիմնահարցերի հաղթահարմանն ուղղված ռեակցիոն աջակցության ծրագրերից զատ պետք է խթանվի քաղաքականության մշակման ու դրա առաջխաղացման ուղղվածությունը: ՀՀ-ում գենդերային հիմնահարցերին անդրադարձող կազմակերպությունների մեծամասնությունն իրականացնում է կանանց այս կամ այն խոցելի խմբին ուղղված աջակցություն: Մինչդեռ այդ կազմակերպությունների՝ սոցիալական քաղաքականության վրա ազդեցությունը և քաղաքականության մշակման գործընթացին մասնակցությունը բավականին պասիվ է: